

Ս.Խ.Մայրապետյան, Ռ.Ժ.Բունիաթյան, Ջ.Ս.Ալեքսանյան, Ա.Յ.Թադևոսյան,
Բ.Թ.Ստեփանյան, Յ.Ս.Գալստյան

ՎԱՐԴԱՅԻՆ ՈՎԴԻՈԼԱՅԻ ԱՆՅՈՂ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԴԻԼԻՋԱՆԻ ԱՆՏԱՈՒՅԻՆ ՓՈՐՉԱԿԱՅԱՆՈՒՄ

ԳԳ ԳԱԱ Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պորբլեմների ինստիտուտ

Ինստիտուտի Դիլիջանի փորձարարական կայանում, անտառային բիոգեոցենոզի պայմաններում մեր կողմից առաջին անգամ փորձարկվել է ադապտացնել հատկությամբ օժտված վարդային ռադիոլայի (*Rhodiola rosea* L.) հիդրոպոնիկ և հողային մշակությամբ աճեցման հնարավորությունը և արդյունավետությունը:

Գետազտությունները ցույց են տվել, որ ռադիոլայի բույսերը լիովին հարմարվել են Դիլիջանի անտառային բիոգեոցենոզի պայմաններին, ցուցադրել են բուռն աճ, կանոնավոր ծաղկում և պտղակալում: Հիդրոպոնիկ պայմանները նպաստել են բույսի ցողունների քանակի ավելացմանը: 6 տարեկան ռադիոլայի 1 կոնդարմատի վրա առաջացած ցողունների թիվը հիդրոպոնիկայում եղել է 95, հողում՝ 50 հատ, 8 տարեկան ռադիոլայի կոնդարմատի թաց քաշը հիդրոպոնիկայում կազմել է 580, իսկ հողում՝ 350գ:

Բույսի կոնդարմատի ֆիտոքիմիական վերլուծությունները ցույց են տվել, որ հիդրոպոնիկ և հողային ռադիոլայի կոնդարմատներում ըստ ՆՇ-Ք-ի առկա են հետևյալ դարչնասպիրտային գլիկոզիդները՝ ռոզավին /Rc-0,49/, ռոզարին /Rc-0,58/, ռոզին /Rc-0,71/, դարչնասպիրտ /0,92/, ընդ որում ռոզավինի պարունակությունը կազմել է 1,5 %:

Աշխատանքներ են տարվել նաև Արարատյան դաշտի պայմաններում հիդրոպոնիկ եղանակով ռադիոլայի տնկանյութ /սածիլներ/ ստանալու ուղղությամբ: Մեկ տարեկան բույսերը ձևավորել են մոտ 1գ քաշ ունեցող կոնդարմատ, իսկ երկու տարեկանների մոտ կոնդարմատի քաշը հասել է 4-10գ: Բացի այդ, երկամյա բույսերի 30%-ը ծաղկել է, ինչը վկայում է դրանց արտադրական տնկարկման համար պատրաստ լինելու մասին: Սովորաբար ռադիոլայի տնկանյութ ստացվում է 3-4 տարում, այսինքն՝ Արարատյան դաշտի պայմաններում հիդրոպոնիկ կենսատեխնոլոգիայի կիրառմամբ հնարավոր է ռադիոլայի տնկանյութի ստացման ժամկետը կրճատել կիսով չափ:

S.K.Mairapetyan, R.J.Buniatyan, J.S.Alexanyan, A.H.Tadevosyan, B.T.Stepanyan,
H.M.Galstyan

SOILLESS CULTURE OF *RHODIOLA ROSEA* L. IN DILIJAN FOREST EXPERIMENTAL STATION

Summary

Rhodiola rosea L. plants are fully adapted to Dilijan forest biogeocenoses. The rhizome of 6 years old rhodiola grown in hydroponics has 95 branches while that grown in soil – only 50. The fresh weight of the rhizome of the 8 year old plants grown in hydroponics is 580 g while that of grown in soil – 350 g.

In the Ararat valley conditions, by applying advanced hydroponic technology it is possible to reduce the period of obtaining seedlings two times.